Համաձայնագիր N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-16/22»-01

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-16/22» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «16» նոյեմբերի 2022թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկը, ի դեմս խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (կողմերից յուրաքանչյուրն առանձին հիշատակման ժամանակ այսուհետ նաև՝ Կողմ, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ Կողմեր), հաշվի առնելով ՀՀ կառավարության 03.11.2022թ-ի N 1702-Ն որոշմամբ սահմանված դրույթները և ղեկավարվելով Կողմերի միջև 2022 թվականի նոյեմբերի 3-ին կնքված պետության կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-16/22» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետով՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) Պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրում կատարվում են հետևյալ փոփոխությունները.

1. Պայմանագրի 4.1 կետում «2,299,604,100.0 (երկու միլիարդ երկու հարյուր իննսունինը միլիոն վեց հարյուր չորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «4,998,181,600.0 (չորս միլիարդ ինը հարյուր իննսունութ միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ» բառերով:
2. Պայմանագրի 4.1.1 կետում «4.1 կետում նշված գինը» բառերը փոխարինել «4.1 կետում նշված գնից 4,450,000,000.0 (չորս միլիարդ չորս հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամը»:
3. Պայմանագրի 4.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ «4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Սույն պայմանագրով սահմանված գումարի, այդ թվում նաև կանխավճարի փոխանցումը կատարվում է ըստ պայմանագրի վճարման ժամանակացույցի (հավելված N 2), բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
   Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի (Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մարմին) գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:
4. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցում և Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն Համաձայնագրի համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:
5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
6. Պայմանագրի՝ սույն համաձայնագրով չփոփոխված դրույթները մնում են անփոփոխ:
7. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011041275

ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050022082671005

ՀՎՀՀ 01540062

Գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյան

Հավելված
«16» նոյեմբեր 2022 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-16/22»-01 ծածկագրով համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	79951110/1	«Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի կազմակերպման շրջանակներում բացման արարողության, ժամանցային ծրագրի, համերգային շոուի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև կազմակերպչական այլ անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերում	դրամ	4,998,181,600.0	1	ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041275
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն»
ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671005
ՀՎՀՀ 01540062
Գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյան

Հավելված N 2
«16» նոյեմբեր 2022 թ. կնքված
«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-16/22»-01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/1	մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	4,450,000,000.0	4,998,181,600.0	4,998,181,600.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041275
ՀՎՀՀ 01539597
Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

ԿԱՏԱՐՈՂ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022082671005
ՀՎՀՀ 01540062
Գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյան